ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը (այսուհետ՝ Նախարարություն) հայտարարում է Նախարարությունում քաղաքացիական ծառայության հետևյալ **ժամանակավոր թափուր պաշտոնը զբաղեցնելու մասին**

Ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության, լիցենզավորման և թույտվությունների վարչության լիցենզավորման և թույտվությունների բաժնի գլխավոր մասնագետ (ծածկագիրը՝ 22-33.14-Մ2-7)

Հիմնական գործառույթները՝

1) Իրականացնում է սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման և (կամ) գազաբալոնների պարբերական վկայագրման գործունեության, տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության, մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների կազմակերպման և երկաթուղային տրանսպորտի գործունեության լիցենզավորման աշխատանքները.
2) իրականացնում է միջպետական բեռնափոխադրումների թույլտվություններ տրամադրման աշխատանքները.
3) իրականացնում է տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության, երկաթուղային տրանսպորտի գործունեության լիցենզիաների վերաբերյալ էլեկտրոնային գրանցամատյանների ստեղծման, ընթացիկ կարգով համալրման և պահպանման աշխատանքները.
4) իրականացնում է միջպետական կանոնավոր և ոչ կանոնավոր ուղևորափոխադրումներ և միջպետական բեռնափոխադրումներ իրականացնելու, չմասնատվող բեռներ փոխադրող և վտանգավոր բեռներ փոխադրելու համար թույլտվությունների, թույլատրելի առավելագույն զանգվածը գերազանցող և (կամ) մեկ սռնու վրա ընկնող բեռնվածքը գերազանցող ծանրաքաշ և (կամ) մեծ եզրաչափերը գերազանցող տրանսպորտային միջոցներով փոխադրումների իրականացման երթուղու մեկանգամյա թույլտվության տրամադրման վերաբերյալ էլեկտրոնային գրանցամատյանների ստեղծման, ընթացիկ կարգով համալրման և պահպանման աշխատանքները.
5) իրականացնում է տրանսպորտի ոլորտում լիցենզիաների, թույտվությունների տրամադրման և մատուցվող ծառայությունների վերաբերյալ խորհրդատվության տրամադրման աշխատանքները.
6) իրականացնում է մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների բնագավառում լիցենզավորված անձանց վերաբերյալ տեղեկատվական բազայի ստեղծման, ընթացիկ կարգով համալրման և պահպանման աշխատանքները.
7) իրականացնում է միջպետական կանոնավոր և ոչ կանոնավոր ուղևորափոխադրումների թույլտվությունների տրամադրման աշխատանքները.
8) իրականացնում է մատուցվող ծառայությունների համար ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով պետական տուրքերի հաշվարկման,պետական տուրքերի հետ

կապված գրությունների պատրաստման և գանձումն իրականացնող լիազոր մարմնին տեղեկատվության տրամադրման աշխատանքները.

9) իրականացնում է Հայաստանի Հանրապետության միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների վրա գովազդի տեղադրման թույլտվությունների տրամադրման աշխատանքները.
10) իրականացնում է Հայաստանի Հանրապետության միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների վրա տեղադրված գովազդային վահանակների գույքագրումը /եռամսյակային տարբերակով/ և խախտումների վերաբերյալ տեղեկատվության տրամադրումը լիազոր մարմնին.
11) իրականացնում է Հայաստանի Հանրապետության միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների վրա գովազդի տեղադրման թույլտվությունների տրամադրման վերաբերյալ էլեկտրոնային գրանցամատյանների ստեղծման, ընթացիկ կարգով համալրման և պահպանման աշխատանքները.
12) իրականացնում է նախարարության կողմից մատուցվող ծառայությունների թվայնացման գործընթացը:

Նշված ժամանակավոր թափուր պաշտոնը զբաղեցնելու համար նաև պահանջվում է՝

- Բարձրագույն կրթություն
- Գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ
- Հանրային ծառայության առնվազն երկու տարվա ստաժ կամ երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ տրանսպորտի կամ լիցենզավորման ենթակա գործունեության կամ ֆինանսավարկային կամ տնտեսագիտության կամ իրավունքի կամ ճարտարագիտության բնագավառում՝ երեք տարվա աշխատանքային ստաժ:
- Ժամանակավոր թափուր պաշտոնը զբաղեցնելու ժամկետը՝ **մինչև 05.01.2025թ.**
- Դիմումների ընդունման վերջին ժամկետն է՝ 18.11.2024թ.
- Աշխատավարձի չափը՝ 267072 (երկու հարյուր վաթսունյոթ հազար յոթանասուներկու) ՀՀ դրամ է:
- Աշխատանքի վայրը՝ ք. Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3, հեռ. 010-511-355, 010-511-316, էլ. փոստ՝ n.kirakosyan@mta.gov.am
- **Ընտրություն կատարելու եղանակն է՝** հարցազրույց:

Դիմող ՀՀ քաղաքացիները պետք է անձամբ ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

- դիմում Նախարարության գլխավոր քարտուղարի անունով,
- տվյալ պաշտոնն զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի՝ դիպլոմի /ների/, վկայականի /ների/, աշխատանքային գրքույկի (վերջինիս բացակայության դեպքում անհրաժեշտ է ներկայացնել տեղեկանք/ներ համապատասխան մարմնից/ներից) պատճենները բնօրինակների հետ միասին,
- արական սեռի անձինք՝ նաև զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասից կցագրման վկայականի պատճենները՝ բնօրինակի հետ միասին, կամ համապատասխան տեղեկանք,

- մեկ լուսանկար 3+4 սմ չափսի,
- անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը,
- համառոտ CV:

ՀՀ քաղաքացին փաստաթղթերը ներկայացնում է անձամբ:

Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր՝ ժամը 9.30-ից մինչև 12.30-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից:

<<Հավելված N
Հաստատված է
ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների
նախարարության գլխավոր քարտուղարի
2023թ. դեկտեմբերի 18-ի N 59-Լ հրամանի>>

Հավելված N 15
Հաստատված է
ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների
նախարարության գլխավոր քարտուղարի
2020թ. հունիսի 15-ի N 39-Լ հրամանի

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ

ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ և ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ, ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ և ԹՈՒՅՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ և ԹՈՒՅՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՄԱՍՆԱԳԵՏ

1.Ընդհանուր դրույթներ
1.1. Պաշտոնի անվանումը, ծածկագիրը Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության, լիցենզավորման և թույտվությունների վարչության (այսուհետ՝ Վարչություն) լիցենզավորման և թույտվությունների բաժնի (այսուհետ՝ Բաժին) գլխավոր մասնագետ (այսուհետ՝ Գլխավոր մասնագետ) (ծածկագիրը՝ **22-33.14-Մ2-7**): **1.2. Ենթակա և հաշվետու է** Գլխավոր մասնագետն անմիջական ենթակա և հաշվետու է Բաժնի պետին: **1.3. Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները** Գլխավոր մասնագետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Բաժնի գլխավոր մասնագետներից մեկը: **1.4. Աշխատավայրը** Հայաստան, ք. Երևան, Կենտրոն վարչական շրջան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3
2.Պաշտոնի բնութագիր
2.1. Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները **Գործառույթները՝** 13) Իրականացնում է ***սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման և (կամ) գազաբալոնների պարբերական վկայագրման գործունեության,*** տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության, մարդատար-տաքսի ավտոմոբիլներով

ուղևորափոխադրումների կազմակերպման և երկաթուղային տրանսպորտի գործունեության լիցենզավորման աշխատանքները.

14) իրականացնում է միջպետական բեռնափոխադրումների թույլտվություններ տրամադրման աշխատանքները.

15) իրականացնում է տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության, երկաթուղային տրանսպորտի գործունեության լիցենզիաների վերաբերյալ էլեկտրոնային գրանցամատյանների ստեղծման, ընթացիկ կարգով համալրման և պահպանման աշխատանքները.

16) իրականացնում է միջպետական կանոնավոր և ոչ կանոնավոր ուղևորափոխադրումներ և միջպետական բեռնափոխադրումներ իրականացնելու, չմասնատվող բեռներ փոխադրող և վտանգավոր բեռներ փոխադրելու համար թույլտվությունների, թույլատրելի առավելագույն զանգվածը գերազանցող և (կամ) մեկ սռնու վրա ընկնող բեռնվածքը գերազանցող ծանրաքաշ և (կամ) մեծ եզրաչափերը գերազանցող տրանսպորտային միջոցներով փոխադրումների իրականացման երթուղու մեկանգամյա թույլտվության տրամադրման վերաբերյալ էլեկտրոնային գրանցամատյանների ստեղծման, ընթացիկ կարգով համալրման և պահպանման աշխատանքները.

17) իրականացնում է տրանսպորտի ոլորտում լիցենզիաների, թույտվությունների տրամադրման և մատուցվող ծառայությունների վերաբերյալ խորհրդատվության տրամադրման աշխատանքները.

18) իրականացնում է մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների բնագավառում լիցենզավորված անձանց վերաբերյալ տեղեկատվական բազայի ստեղծման, ընթացիկ կարգով համալրման և պահպանման աշխատանքները.

19) իրականացնում է միջպետական կանոնավոր և ոչ կանոնավոր ուղևորափոխադրումների թույլտվությունների տրամադրման աշխատանքները.

20) իրականացնում է մատուցվող ծառայությունների համար ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով պետական տուրքերի հաշվարկման,պետական տուրքերի հետ կապված գրությունների պատրաստման և գանձումն իրականացնող լիազոր մարմնին տեղեկատվության տրամադրման աշխատանքները.

21) իրականացնում է Հայաստանի Հանրապետության միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների վրա գովազդի տեղադրման թույլտվությունների տրամադրման աշխատանքները.

22) իրականացնում է Հայաստանի Հանրապետության միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների վրա տեղադրված գովազդային վահանակների գույքագրումը /եռամսյակային տարբերակով/ և խախտումների վերաբերյալ տեղեկատվության տրամադրումը լիազոր մարմնին.

23) իրականացնում է Հայաստանի Հանրապետության միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների վրա գովազդի տեղադրման թույլտվությունների տրամադրման վերաբերյալ էլեկտրոնային գրանցամատյանների ստեղծման, ընթացիկ կարգով համալրման և պահպանման աշխատանքները.

24) իրականացնում է նախարարության կողմից մատուցվող ծառայությունների թվայնացման գործընթացը:

Իրավունքները

- համապատասխան լիցենզավորող հանձնաժողովներից ստանալ ***սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման և (կամ) գազաբալոնների պարբերական վկայագրման գործունեության,*** տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության, մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների կազմակերպման, երկաթուղային

տրանսպորտի գործունեության լիցենզավորման համար հիմքեր.

- իրավաբանական և ֆիզիկական անձանցից հավաքագրել վարչության կողմից լիցենզավորման ենթակա գործունեության բազայի ստեղծման և թույտվությունների էլեկտրոնային գրանցամատյանների համար համապատասխան փաստաթղթեր.
- մատուցվող ծառայությունների համար պետական տուրքի հաշվարկման և գանձման համար համապատասխան անձանցից ստանալ վճարումը հավաստող փաստաթղթեր.
- համապատասխան մրցույթային հանձնաժողովից ստանալ միջպետական կանոնավոր և ոչ կանոնավոր ուղևորափոխադրումների թույլտվությունների տրամադրման համար հիմքեր.
- համապատասխան մարմիններից և իրավաբանական անձանցից ստանալ անհրաժեշտ փաստաթղթեր և նյութեր տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության կտրոնների տրամադրման համար.
- համապատասխան մարմիններից ստանալ եզրակացություններ՝ Հայաստանի Հանրապետության միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների վրա գովազդի տեղադրման թույլտվությունների տրամադրման համար.
- համապատասխան հանձնաժողովներից և աշխատակիցներից հավաքել գրությունների, տեղեկանքների, զեկուցագրերի պատրաստման համար նյութեր,
- համապատասխան մարմիններից ստանալ անհրաժեշտ փաստաթղթեր, իրավաբանական և ֆիզիկական անձանցից պահանջել և ստանալ համապատասխան փաստաթղթեր.
- իրավաբանական և ֆիզիկական անձանցից ստանալ թույլտվությունների տրամադրման վերաբերյալ համապատասխան փաստաթղթեր Հայաստանի Հանրապետության միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների վրա գովազդի տեղադրման թույլտվությունների տրամադրման վերաբերյալ.
- հավաքագրել համապատասխան նյութեր՝ մատուցվող ծառայությունների թվայնացման գործընթացի նպատակով:

Պարտականությունները

- ուսումնասիրել ***սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման և (կամ) գազաբալոնների պարբերական վկայագրման,*** տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության լիցենզավորման համար ներկայացված փաստաթղթերը, ամփոփել և տալ եզրակացություն.
- ուսումնասիրել մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների և երկաթուղային տրանսպորտի գործունեության լիցենզավորման համար ներկայացված ամբողջական փաստաթղթերը և ներկայացնել առաջարկություններ.
- ուսումնասիրել միջպետական բեռնափոխադրումների թույլտվությունների համար ներկայացված փաստաթղթերի ամբողջական փաթեթը և ստուգել.
- էլեկտրոնային գրանցամատյանների ստեղծման համար տեղեկատվության ուսումնասիրություն, ամփոփում և նյութերի ամրագրում.
- պետական տուրքի հաշվարկում և ***չվճարված պետական տուրքերի և տույժերի վերաբերյալ լիցենզավորված կազմակերպություններին գրությունների*** նախապատրաստում.
- ուսումնասիրել քաղաքացիների դիմումներն ու բողոքները և նախապատրաստել եզրակացություն.
- տրամադրել հաշվետվություններ ու տեղեկատվություն և պատրաստել գրություններ,

տեղեկանքներ, զեկուցագրեր.

- ստուգել ներկայացված փաստաթղթերի՝ օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխանությունը և մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների բազայում կատարվող փոփոխությունների համար նախապատրաստել համապատասխան նյութեր և հիմքեր.
- ուսումնասիրել համապատասխան բեռներ փոխադրելու համար թույլտվությունների համար ներկայացված փաստաթղթերի ամբողջական փաթեթը, ամփոփել և ներկայացնել մասնագիտական առաջարկություններ.
- ուսումնասիրել միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների վրա գովազդի տեղադրման թույլտվությունների տրամադրման համար հավաքագրված փաստաթղթերի փաթեթները, անհրաժեշտության դեպքում պահանջել ներկայացնելու լրացուցիչ փաստաթղթեր.
- ուսումնասիրել գույքագրման փաստաթղթերը և արդյունքների վերաբերյալ տրամադրել տեղեկատվություն.
- էլեկտրոնային գրանցամատյանների ստեղծման համար ուսումնասիրել հավաքագրված նյութերը, ամփոփել, մասնակցել քննարկումներին և ներկայացնել առաջարկություններ.
- ուսումնասիրել լիցենզավորման հանձնաժողովի նիստերին ներկայացվող նյութերը, նախապատրաստել համապատասխան տեղեկանքներ.
- ուսումնասիրել նախարարության կողմից մատուցվող ծառայությունների թվայնացման գործընթացի հնարավորությունները:

3. Պաշտոնին ներկայացվող պահանջներ

3.1. Կրթություն, որակավորման աստիճանը

Բարձրագույն կրթություն

3.2. Մասնագիտական գիտելիքները՝

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ:

3.3. Աշխատանքային ստաժը, աշխատանքի բնագավառում փորձը

Հանրային ծառայության առնվազն երկու տարվա ստաժ կամ երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ տրանսպորտի կամ լիցենզավորման ենթակա գործունեության կամ ֆինանսավարկային կամ տնտեսագիտության կամ իրավունքի կամ ճարտարագիտության բնագավառում՝ երեք տարվա աշխատանքային ստաժ:

3.4. Անհրաժեշտ կոմպետենցիաներ

Ընդհանրական կոմպետենցիաներ՝

1.Ծրագրերի մշակում
2.Խնդրի լուծում
3.Հաշվետվությունների մշակում
4.Տեղեկատվության հավաքագրում, վերլուծություն
5.Բարեվարքություն

Ընտրանքային կոմպետենցիաներ՝

1. Բանակցությունների վարում
2. Բողոքների բավարարում
3. Ժամանակի կառավարում
4. Ծառայությունների մատուցում

5. Ելույթների նախապատրաստում և կազմակերպում

4.Կազմակերպական շրջանակ

4.1. Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

Պատասխանատու է կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների բնույթով պայմանավորված մասնագիտական գործունեության անմիջական արդյունքի համար:

4.2 Որոշումներ կայացնելու լիազորությունները

Կայացնում է որոշումներ աշխատանքների իրականացման բնույթով պայմանավորված մասնագիտական եզրակացությունների տրամադրման և դիմումների քննարկման արդյունքում որոշումների նախապատրաստման և ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում որոշումների կայացման շրջանակներում:

4.3 Գործունեության ազդեցությունը

Ունի տվյալ մարմնի նպատակների և խնդիրների իրականացման արդյունքների ապահովման մասնագիտական գործունեության որոշակի ոլորտին վերաբերող համապետական ազդեցություն:

4.4 Շփումները և ներկայացուցչությունը

Իր իրավասությունների շրջանակներում շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս տվյալ մարմնի ներսում այլ կառուցվածքային ստորաբաժանումների, այլ մարմինների ներկայացուցիչների հետ, հանդես է գալիս պետական մարմինների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ ձևավորված աշխատանքային խմբերում:

4.5 Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում է մասնագիտական խնդիրներ և այդ խնդիրներին տալիս է մասնագիտական լուծումներ և մասնակցում է կառուցվածքային ստորաբաժանման առջև դրված խնդիրների լուծմանը: